Կարծիք

Գագիկ Կառլենի Էմինյանի **«Հասարակագիտական առարկաները որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմք»**խորագրով ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման:

Գագիկ Էմինյանի ատենախոսությունը նվիրված է պետական կրթական քաղաքականության և մանկավարժության գերակա խնդիրներից մեկին՝ ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակությանը որի կարևորության մասին հատկապես շեշտված է Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրում:

Ակնհայտ է, որ չնայած մանկավարժների կողմից հայրենասիրական դաստիարակության հիմնախնդրի կարևորության գիտակցվածությանը, այս հարցում դեռևս լիարժեքորեն չեն օգտագործվում հասարակագիտական առարկաների բովանդակային և դաստիարակչական ներուժը:

Այս առումով քննարկվող ատենախոսությունն արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է, որն ունի գիտատեսական, մեթոդաբանական, ազգային անվտանգության ապահովման կարևոր նշանակություն: Ատենախոսության գիտատեսական արժեքը պայմանավորված է նրանով, որ հայրենասիրական դաստիարակության արդյունավետ իրականացման հիմնահարցերը դիտարկվում են ավագ դպրոցում դասավանդվող հասարակագիտական առարկաների բովանդակային հնարավորությունների օգտագործման տիրույթում, ինչը մանկավարժահոգեբանական, մեթոդաբանական տեսանկյուններից դեռևս խորությամբ ուսումնասիրված չէ:

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Հետազոտության ներածությունում ատենախոսը հիմնավորել է թեմայի արդիականությունը, սահմանել նպատակը, խնդիրները, որոնք փորձել է լուծել հետազոտության երեք գլխում:

Հետազոտության առաջին գլխում ներկայացվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական գիտական գրականությունում առկա մոտեցումներն ու տեսակետները, գիտամանկավարժական մոտեցումները, հայեցակարգային դրույթները: Բնութագրվել է հայրենասիրական դաստիարակության էությունը և բովանդակությունը, Հայաստանի Հանրապետությունում հայրենասիրական դաստիարակության իրականացման անհրաժեշտությունը, որպես ազգային անվտանգության երաշխիք:Ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից՝ վերլուծվել են հասարակագիտական առարկաների հայեցակարգերը, արդյունքում ատենախոսը ներկայացրել է իր գիտական դիրքորոշումը:

Հստակեցվել են «հայրենասեր», «հայրենասիրություն» հասկացությունների էությունը, ընդլայնվել՝ դրանց ընկալման սահմանները, ներկայացվել է ատենախոսի կողմնորոշումն այդ հասկացությունների սահմանման վերաբերյալ: Ատենախոսը փորձել է մշակել հայրենասերի կատարելատիպը,սակայն այն մեր կարծիքով թերի է ստացվել: Ատենախոսի կողմից բացահայտվել և բնութագրվել են ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները և սկզբունքները: Բնութագրվել են այդ առանձնահատկություններից և սկզբունքներից բխող հասարակագիտական առարկաների ուսուցման գործընթացի կազմակերպմանը ներկայացվող հիմնական պահանջներն և վերոնշյալ պահանջների իրացման շրջանակներում ներկայացվել են ատենախոսի կողմից առաջարկվող հայրենասիրականան դաստիարակության մեթոդները, միջոցները, ձևերն ու պայմանները:

Ատենախոսությունում, որպես ավագ դպրոցում հայրենասիրական դաստիարակության իրացման ուղի, հեղինակը շեշտադրում է ավագ դպրոցականների մոտ հայրենասիրության վերաբերյալ միասնական

պատկերացումների ձևավորումը, որը, ըստ նրա՝ հնարավորություն կտա կանխատեսելու դրանց դրսևորումները արտաքին ազդակների առկայության և բացակայության պարագայում: Միևնույն ժամանակ, ատենախոսը հայրենասիրական դաստիարակության կարևոր խնդիրներից մեկը համարում է սովորողների դրական մոտիվացիայի ձևավորումն է՝ շեշտադրելով նաև այն հանգամանքը, որ հայրենասիրությունը բարոյական կատեգորիա է, ուստի անձի բարոյական դաստիարակության ժամանակակից մոտեցումները ևս կնպաստեն սովորողների հայրենասիրության անհատական և թիմային ձևերի դրսևորումներին: Ատենախոսը այն գիտական կողմնորոշմանն է, որ սովորողների հայրենասիրական դաստիարակության խնդիրների արդյունավետ լուծման համար անհրաժեշտ են ձեռնարկել գործնական քայլեր, ապահովել համապատասխան մանկավարժական պայմաններ,դաստիրակչական միջավայր, որոնք, ընդ որում, առաջադրված և ներկայացված են ատենախոսությունում:

Առաջին գլխի վերջում ներկայացված է ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման, ինչպես նաև ուսումնական գործընթացում ներգրավված մասնակիցների պատկերացումների հարստացմամմ ուղղված հեղինակի կողմից մշակված ժամանակակից հայրենասերի մոդելը, որն ըստ էության ոչ թե ժամանակակից հայրենասերի կերպարի կառուցվածքային բաղադրիչներն են, այլ հեղինակի հետազոտության նպատակում նշված մեթոդական համակարգն է:

Ատենախոսության երկրորդ գլխում դիտարկված են հասարակագիտական առարկաների ուսուցման արդյունավետ կազմակերպման հարցերը՝ որպես ավագ դպրոցականների հայրենասիրության ձևավորման և դրսևորման հիմք:

Երրորդ գլխում ներկայացված է ավագ դպրոցականների հայրենասիրության ձևավորման և դրսևորման գործընթացի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների վերլուծությունը ու ամփոփումը:

Ներկայացված է ատենախոսի կողմից մշակված Հայրենագիտական դասընթացի էությունը և բովանդակությունը գիտականորեն հիմնավորված է դրա հանրակրթական դպրոցում ներդրման անհրաժեշտությունը :
«Հայրենագիտական դասընթաց»-ի փորձաքննությունն ու ներդնումը, սոցհարցումները և դրանց արդյունքների վերլուծությունը հավաստի են: Հետազոտությունը եզրափակում է մշակված մեթոդական համակարգի մոդելի կառուցվածքի ներկայացումը: Արդյունքները համապատասխանում են հետազոտության տրամաբանությանը: Մշակված հարցաթերթիկներն ընդգրկուն են, հարցերին տրված պատասխանները հանգամանալից վերլուծվել և համակարգվել են ըստ իմաստային դրսևորումների:

Ատենախոսության գիտական արժանիքներից են՝

- «Հայրենասեր», «հայրենասիրություն» հասկացությունների էության հստակեցումը:
- Ատենախոսի կողմից բացահայտված և բնութագրված ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները, սկզբունքները, սովորողների դրական մոտիվացիայի ձևավորման անհրաժեշտության հիմնավորումը, առաջարկված մեթոդները, ձևերն ու միջոցները, դրանց արդյունավետ իրականացման մանկավարժական պայմանները:
- Մշակված «Հայրենագիտական դասընթաց»-ը և ծրագիրը:

Գագիկ Կառլենի Էմինյանի «Հասարակագիտական առարկաները որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմք» թեմայով ատենախոսական աշխատանքը ըստ էության տրամաբանորեն ավարտուն, ինքնուրույն, ամբողջական հետազոտություն է: Ատենախոսության տեսական վերլուծությունները, գիտական նոր սահմանումները վկայում են հեղինակի գիտահետազոտական կարողությունների առկայության մասին:

Այնուհանդերձ ատենախոսությունը զերծ չի մնացել թերություններից՝

1. Ատենախոսության առաջին գլուխը գերծանրաբեռնված է թեմային չվերաբերող վերլուծություններով, օրինակ, ուսուցման և

դաստիարակության գործընթացում սովորողների գնահատմանը, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ստեղծագործական մտածողության առանձնահատկություններին վերաբերող մասերը:

2. Ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով հեղինակի կողմից մշակված «ժամանակակից հայրենասերի մոդելը» գծապատկերի բովանդակությունը վերնագրին չի համապատասխանում (70), ըստ էության դրանում ոչ թե ժամանակակից հայրենասերի կերպարի կառուցվածքային բաղադրիչներն են ներկայացված, այլ հեղինակի հետազոտության նպատակում նշված ամբողջական մեթոդական համակարգը, որում լիարժեքորեն ներկայացված են հայրենասիրական դաստիարակության արդյունավետ կազմակերպման նորագույն ձևերը, միջոցները, տեխնոլոգիաներն ու մեթոդները, որոնց արդյունավետությունը հիմնավորված է նաև ատենախոսության մեջ:
3. Ատենախոսության 153-րդ էջում ներկայացված մեթոդական համակարգը որևէ կապ չունի իրական «մեթոդական համակարգ» հասկացության հետ, քանի որ դրանում որևէ մեկ մեթոդի, կամ միջոցի մասին բառ անգամ չկա: Կարծում ենք 70-րդ և 153-րդ էջերում ներկայացված գծապատկերների վերնագրերը պետք է փոխատեղվեին, որի արդյունքում դրանք կզբաղեցնեն իրենց համապատասխան տեղերը և կերևա հետազոտության իրական արժեքը:
4. Հեղինակը ատենախոսությունում ներկայացրել է ժամանակակից հայրենասերի կերպարը բնութագրող հիմնական գծերը, որոնք չեն արտացոլվել մշակված մոդելներում, ինչը մենք համարում ենք անփութության հետևանք:
5. Ատենախոսությունում տեղ են գտել վրիպակներ, անիմաստ նախադասություններ և ձևակերպումներ, շարահյուսական սխալներ:

Չնայած նշված թերություններին՝ Գագիկ Կառլենի Էմինյանի **«Հասարակագիտական առարկաները որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմք»** խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ. 00. 01. «Մանկավարժության տեսություն եվ պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր **Լ.Թ.Ասատրյան**

Պրոֆեսոր Լ.Թ.Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտքարտուղար,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Մ. Մ. Իսպիրյան**

11.10.2022թ.